

ԳԻՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ*

Բանալի բառեր – չափանիշներ, որակ, հումանիտար գիտություններ, մասնագիտական խորհուրդ, ատենախոսություն, հանդես, պաշտպանություն, փորձագետ, մեթոդաբանություն, հայեցակարգ:

Հայաստանում 2018 թվականի գարնանը տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո մեր պետության կառավարման շատ քիչ ոլորտներում են նշմարվել լուրջ բարեփոխումների իրականացման մտադրություններ և դրանց համապատասխանող՝ ռազմավարական նպատակների ու առաջնահերթությունների հստակեցման փորձեր:

Առայժմ սուկ հինը քանդելու նպատակ ունեցող նոր իշխանությունների չհամակարգված քայլերը չեն շոշափում նրա խորքային հենասյուները, որոնք անխռով կերպով գոյատևում են մեր կյանքի բոլոր ոլորտներում: Դրանք հատկապես մեծ ավերներ են գործում նոր սերնդի կրթության ու մասնագետ կադրերի պատրաստման առաքելություն ունեցող գիտակրթական համալիրի տարբեր օղակներում, որտեղ անցած տարիներին իսպառ դադարել են գործել գիտական արտադրանքի **որակի** գնահատման չափանիշները: Պատճառներից մեկն այն է, որ այդ խնդրի լուծան համար պատասխանատու ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեն (ԲՈԿ)¹ մինչև վերջերս շարունակում էր գործել խորհրդային շրջանից պահպանված՝ գիտական աստիճանների շնորհման հին համակարգի հիման վրա: Հետխորհրդային տարիներին այդպես էլ չբարեփոխված այդ կառույցը ոչ միայն պահպանել էր իր փակ գործելակերպը, այլև 2008-ից հետո Հայաստանում արձանագրված բրեժնևյան լճացման «երկրորդ հրատարակության» համատեքստում բռնել էր վերջնական դեգրադացիայի ուղին:

2008-ից հետո գրեթե ամբողջովին Խորհրդային Հայաստանի կոմկուսի կենտրոնի գործառույթը ստանձնած՝ ամենագոր **նախագահականը** փաստորեն իր ձեռքն էր վերցրել ոչ միայն այդ կարևոր գիտական օղակի վերահսկողության, այլև իշխող կուսակցության երիտասարդ բյուրոկրատիայի համար անհրաժեշտ քանակությամբ գիտական կոչումներ ապահովելու գործը: Նախագահականի հովանավորյալներին ու մանավանդ կառավարող ՀՀԿ-ի երիտասարդ կադրերին զարտուղի ձանապարհներով գիտական կոչումներ ապահովելու համար կիրառվում էր «զանգերի» միջոցով հարցեր լուծելու խորհրդային ծանոթ գործելակերպը: Ո՞րն էր մեր նախկին «էլիտայի» մոտ արթնացած՝ գիտական կոչումների հանդեպ այդքան բուռն սիրո

Ժ (ԺԶ) փարի, թիվ 3 (63), հայխա-սեպտեմբեր, 2018
ՎԿՎ համահայկական հանդես

*Ընդունվել է տպագրության 28.09.2018:
1 Նախկինում՝ Բարձրագույն որակավորման հանձնաժողով (ԲՈՀ):

պատճառը: Դա մի կողմից՝ պետական պաշտոն ստանձնելու կամ պատգամավոր դառնալու հարցում լրացուցիչ կռվաններ ապահովելու, այսինքն՝ «իմաստուն երևալու» եղանակ էր, իսկ մյուս կողմից՝ բանակից ազատվելու սողանցք՝ երիտասարդ «նժդեհականների» համար:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անցած 10 տարիների ընթացքում ՀՀԿ-ի երիտասարդական թևի կարկառուն դեմքերը որպես կանոն՝ ասպիրանտներ ու հայցորդներ են ձևակերպվել Հայաստանի այս կամ այն ԲՈՒՀ-ում կամ ակադեմիական հաստատությունում: Դրանից հետո նրանց ձեռքերում հայտնվել են ինչ-որ տեղ գրված ատենախոսություններ և ապա կազմակերպվել են թատերականացված պաշտպանություններ: Երիտասարդական թևից հետ չմնալու համար ատենախոսություններ պաշտպանելու գործի մեջ էին ներգավվել նաև ՀՀԿ-ի գործարար և անգամ՝ քրեական հատվածի մի շարք կարկառուն դեմքեր՝ քաղաքապետներ, մարզպետներ և այլն:

Այս ամենի արդյունքում վերջին տասնամյակում ձևավորվել է կեղծ ատենախոսություններով դիպլոմավորված կիսագրագետների մի սովոր բանակ, որը տիրացել է ոչ միայն պետական պաշտոնների, այլև զավթել է հանրապետության առաջատար ԲՈՒՀ-երի «պրեստիժ» ամբիոնները, հիմնել է կեղծ գիտահետազոտական հաստատություններ ու պարզապես պարագիտանում է գիտնականի անունը շահարկելով:

Անցած տասնամյակում գիտության ու գիտականության չափանիշների հետևողական ոչնչացմանն ուղղված նման քայլերին բազմիցս է անդրադարձել հայաստանյան մամուլը: Ուստի ԲՈՒՀ-ի նախկին ղեկավարությունը սկսել էր անգամ դիմադրել ու համառել մի շարք մասնագիտական խորհուրդների վրա գործադրված անմիջական ճնշումներից հետո պաշտպանված «ատենախոսությունները» հաստատելու հարցում: Դրանք արագորեն դակելու համար հարկ եղավ անգամ ԲՈՒՀ-ի օրվան ղեկավար Ա. Ղուկասյանն «գրույցի» հրավիրել նախագահական՝ «մեր տղերքին» նեղացնելու և նրանցից երկուսի կասկածելի դոկտորականների հաստատմանը խոչընդոտելու պատճառաբանությամբ և վերջինս ստիպված էր հրաժեշտ տալ իր պաշտոնին:

Դրանից հետո ՀՀ ԲՈՒՀ-ը վերջնականապես դարձավ անորակ դոկտորականների ու գիտության հետ փաստորեն կապ չունեցող թեկնածուականների պաշտպանության ու հաստատման արագընթաց կոնվեյերի վերջին օղակը: Այս գործընթացի մեջ ներգրավվեցին նաև նախագահականի և իշխող կուսակցության հետ անմիջականորեն կապված որոշ գիտակրթական հաստատությունների տնօրեններ: Վերջիններիս կողմից առանձին մասնագիտական խորհուրդներն անմիջականորեն ղեկավարելու կամ՝ նրանց «զոն նայողը» դառնալու արդյունքում բացվեցին լրացուցիչ սողանցքներ՝ բացահայտ արտագրություններն ու ակնհայտ կոմպիլյացիաներն անցկացնելու համար: Առավել առևտրայնացված մասնագիտական խորհուրդներ ստեղծվեցին տնտեսագիտության ասպարեզում, որոնք ուղղակի դակում էին ինչ-որ տեղ գրված կասկածելի ատենախոսություններն ու ուղարկում ԲՈՒՀ-ին: Դրանց նշանակալի մասի կաղապարը նույնն էր՝ պարզապես փոխվում էին ուսումնասիրվող թեմայի ժամանակագրական շրջանակները:

Երիտասարդ «նժդեհականների» համար բանակից ազատվելու սողանցքներ ստեղծելու գործին լծվեցին նաև հումանիտար ու հասարակական

գիտությունների բնագավառում գործող գրեթե բոլոր մասնագիտական խորհուրդները՝ չնչին բացառություններով հանդերձ: Տարբերությունը միայն նրանում էր, որ եթե տնտեսագետների շրջանում տարածված էր զանազան կայքերում տեղադրված նյութերը վերաշարադրելու գործելակերպը, ապա հումանիտար ու հասարակական գիտությունների բնագավառում լայն տարածում էր գտել նաև ատենախոսություններ պատվիրել-գրելու պրակտիկան: Ուստի պատահական չէ, որ այդ տարիներին մի շարք մասնագիտական խորհուրդներից հեռացան կամ ԲՈՀ-ի ղեկավարությանն ուղղված համապատասխան զանգերի միջոցով ուղղակի՝ հեռացվեցին իրենց շատ թե քիչ հարգող բազմաթիվ գիտնականներ:

Մեր գիտական հանրությանն այսօր քաջ հայտնի են ինչպես **նրանց** անունները, որ բիզնեսի առարկա էին դարձրել գիտական աստիճանների շնորհման համակարգը, այնպես էլ այդ ընթացքում «պաշտպանված» առավել խոտան ատենախոսությունների վերնագրերն ու դրանց **հեղինակները**: Վերջիններիս մի մասի «պաշտպանությունների» ընթացքի վերաբերյալ հյուսվել են նաև բազմաթիվ **անեկդոտներ**՝ հարստացնելով մեր ժողովրդական բանահյուսությունը: Ուստի այսօր ավելորդ ենք համարում գիտական հանդեսում տեղ տալ նման ածայարարությունների ու նրանց հեղինակների թվարկմանը: Դա մեծ պատիվ կլինի գիտության հետ կապ չունեցող ոչնչությունների համար:

Բայց ասվածն ապացուցելու համար պարտավոր ենք բերել որոշ փաստական տվյալներ 2008-ից հետո Հայաստանում պաշտպանված ու հաստատված դոկտորական ու թեկնածուական ատենախոսությունների թվաքանակի աննախադեպ աճի վերաբերյալ: Քանի որ դրանք վերցված են ՀՀ ԲՈԿ-ի կայքից, ակնհայտ է դառնում, որ եթե առաջնորդվենք պաշտոնական վիճակագրությամբ, պետք է եզրակացնենք, որ վերջին տասնամյակում Հայաստանում «շեշտակի վերելք» է արձանագրվել գիտության զարգացման բոլոր հիմնական բնագավառներում: Ընդ որում՝ բնական ու ձշգրիտ գիտություններն «աճել են» **թվաքանակա**ն, իսկ հասարակական ու հումանիտար գիտությունները՝ գրեթե **երկրաչափական** պրոգրեսիայով:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում գիտությունների թեկնածուի և դոկտորի վկայագրեր ստացած անձանց թվաքանակի վերաբերյալ ՀՀ ԲՈԿ-ի կայքէջում տեղադրված պաշտոնական տվյալների՝ 1994 թվականին բոլոր գիտությունների գծով նրանց ընդհանուր թիվը եղել է ընդամենը՝ **103**, 1995-ին՝ **152**, 1996-ին՝ **196**, 1997-ին՝ **247**, 1998-ին՝ **252**, 1999-ին՝ **256**, 2000-ին՝ **265**, 2001-ին՝ **348**, 2002-ին՝ **425**, 2003-ին՝ **421**, 2004-ին՝ **481**, 2005-ին՝ **475**, 2006-ին՝ **488**, 2007-ին՝ **530**, 2008-ին՝ **566**, 2009-ին՝ **568**, 2010-ին՝ **539**, 2011-ին՝ **517**, 2012-ին՝ **495**, 2013-ին՝ **610**, 2014-ին՝ **594**, 2015-ին՝ **593**, 2016-ին՝ **465**, 2017-ին՝ **394**: Այսինքն՝ Հայաստանում գիտության զարգացման բարձրակետը եղել են «թունդ լճացման» տարիները՝ 2012-2015 թվականները, որոնց ընթացքում դիպլոմավորվել է մեր պաշտոնետության ու ՀՀԿ-ի երիտթևի զգալի մասը: Իսկ դրանից հետո արձանագրված թվերի որոշակի անկումը պայմանավորված էր նրանով որ գիտական կոչումներ դակող «հարվածային բրիգադները»՝ տնտեսագիտության ու հումանիտար գիտությունների գծով հայտնի խորհուրդները կանգնել էին «հաճախորդների» սուր դեֆիցիտի փաստի առաջ՝ վերնախավի պահանջարկը հիմնականում բավարարված էր, իսկ նրանց գիտական կոչումներ ստանալու արդ-

յունքում համակարգն այնքան էր վարկաբեկվել, որ շատերը պարզապես խուսափում էին դիպլոմավորվելու հեռանկարից:

Ավելին, նման «գիտնականների» քանակական աճն արձանագրվում էր **ճիշտ և ճիշտ** այն հասարակական ու հումանիտար գիտությունների բնագավառում, որոնք ավելի հետ էին մնում համաշխարհային գիտության զարգացման ընդհանուր մակարդակից: Այսպես՝ 2008–20017 թվականներին, այսինքն՝ անցած 10 տարիների ընթացքում տնտեսագիտության գծով Հայաստանում պաշտպանվել է **28** դոկտորական և **932** թեկնածուական ատենախոսություն, այսինքն՝ «արտադրվել է» մոտ 1000 «գիտնական»: Եվ դա այն դեպքում, երբ այդ տարիներին տնտեսությունից շատ թե քիչ հասկացող մասնագետները հիմնականում խորհրդային շրջանում ու նրանից անմիջապես հետո դիպլոմավորված կադրերն էին:

Նույնն էր պատկերը նաև հումանիտար գիտությունների տարբեր բնագավառներում: Այսպես՝ հայ պատմագիտության մեջ, որտեղ բացառությամբ եզակի մասնագետների՝ դեռևս գաղափար անգամ չունեն ցանկացած գիտության համար պարտադիր՝ գիտական տեսությունից ու մեթոդից, դիպլոմավորված գիտնականների աննախադեպ աճի պատկերը նույնպես ոչ պակաս տպավորիչ է: 2008–20017 թվականներին, այսինքն՝ անցած 10 տարիների ընթացքում Հայաստանում **35** հոգի ստացել է պատմական գիտությունների դոկտորի բարձրագույն աստիճան, **258**-ը՝ թեկնածուի:

Իսկ ահա բանասերների մոտ նույն շրջանում դիպլոմավորված դոկտորների թիվը հասել է **41**-ի, իսկ թեկնածուների թիվն էլ ավելի տպավորիչ է՝ **511**:

Եվ դա այն պարագայում, երբ գիտական հանդեսների խմբագիրներս մեր երկու ձեռքերի մատների վրա կարող ենք հաշվել շատ թե քիչ որակյալ հոդվածներ գրող հայաստանյան գիտնականներին: Ուրեմն ովքեր են գիտական հանրությանն անհայտ այս **տիտանները**, որտեղ են հրապարակվել նրանց հանձարեղ մտքերը:

Գիտական հանդեսների տպագրության առումով նույնպես անցած 10-ամյակում արձանագրվել է աննախադեպ քանակական աճ և որակի սարսափելի անկում: Հումանիտար գիտությունների բնագավառում այդ տարիներին ԲՈՀ-ի կողմից հաստատվել և թեկնածուական ու անգամ դոկտորական ատենախոսություններին անհրաժեշտ հոդվածների տպագրության համար պիտանի են համարվել այնպիսի հանդեսներ ու ժողովածուներ, որոնցում հրապարակվող նյութերը ոչ միայն չեն գրախոսվում, այլև ընդունված հոդվածները չեն էլ ընթերցվում՝ չխոսելով արդեն միջազգային մակարդակի հասնելու ձգտման լիակատար բացակայության մասին:

Իրականությունն այն է, որ մեզանում ինչպես մասնագիտական խորհուրդների այնպես էլ գիտական համարվող հրատարակությունների մեծ մասի գնահատման չափանիշները ձևավորվել են խորհրդային շրջանում, իսկ Հայաստանի անկախացումից հետո դրանք պարզապես վերածվել են սովորական համբարությունների: Այստեղ պաշտպանության բարեհաջող ընթացքը կախված է մեկ կամ մի քանի անձի ցանկությունից, իսկ գիտական հրապարակման տպագրությունը՝ սովորական զանգից: Պաշտպանության ներկայացվող աշխատանքների մի մասը հաճախ սողոսկում է իր մասնագիտական շիֆրին չհամապատասխանող խորհուրդներ, որովհետև ամեն ինչ կախված է նրանց նախագահների բարի կամեցողությունից: Լիովին

բացակայում է ընդդիմախոսության ինստիտուտը, քանի որ ընդդիմախոսներն ընտրվում են ոչ թե ըստ նեղ մասնագիտացման, այլ բարեհաճ վերաբերմունքի սկզբունքով:

Նույնն է վիճակը նաև ատենախոսությունների հաստատման ասպարեզում, ինչը վկայում է այն մասին, որ մեզանում գիտության զարգացման վերաբերյալ բոլոր առաջարկներն ու նախագծերը գրոշի արժեք չեն ունենա, եթե ոլորտի բարեփոխումը չսկսենք հստակ չափանիշներ սահմանելու և կյանքի կոչելու գործից: Դրանք պետք է տարածվեն նաև վերջին տասնամյակում պաշտպանված ատենախոսությունների վրա, որոնցում զգալի թիվ են կազմում արտագրություններն ու պարզ կոմպիլյացիաները:

Այս առումով մեր երկրի նոր իշխանությունների մոտ թեև նկատվում է որոշակի մտահոգություն, սակայն դեռևս բացակայում են հստակ հայեցակարգային մոտեցումները: Գիտության ասպարեզում նրանց **առաջին** քայլն իրականում պետք է լիներ ոչ թե ՀՀ ԲՈԸ-ի պարզ անվանափոխությունը ՀՀ ԲՈԿ-ի, այլ նրա հիմքի վրա ՀՀ պետական բոլոր ինստիտուտներից լիարժեքորեն անկախ **Ազգային փորձագիտական կենտրոնի** հիմնումը, որը կենթարկվի ոչ թե Կրթության ու գիտության նախարարությանը, այլ կունենա լիովին ինքնուրույն կարգավիճակ՝ Սահմանադրական դատարանի կամ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի նման և կֆինանսավորվի ՀՀ պետբյուջեի առանձին հոդվածով:

Երկրորդ առաջադրանքը հիմնական մասնագիտությունների հստակեցումն ու կրկնվող գործառույթներ իրականացնող մասնագիտական խորհուրդների կրճատումն է՝ **մեկ մասնագիտություն՝ մեկ խորհուրդ** սկզբունքով, որի անդամները պետք է ունենան հավասար իրավունքներ, ինչպես նաև մեկ դեմ քվեարկության հիման վրա Ազգային փորձագիտական կենտրոնին դիմելու և անկախ փորձաքննություն պահանջելու հնարավորություն:

Երրորդ. մասնագիտական խորհուրդների ձևավորումը պետք է իրականացվի գիտական արդյունքի արտադրությունն ու նրա որակի գնահատման գործը միմյանցից տարանջատելու սկզբունքով, այսինքն՝ նրանք պետք է ունենան կոնկրետ ատենախոսության պաշտպանության ընթացքում փոփոխվող կազմեր, որոնք կբացառեն գիտական արտադրանք տվող հաստատությունների քվեի առկայությունը իրենց իսկ արտադրանքի գնահատման գործընթացում:

Չորրորդ քայլով հարկ է սահմանել պաշտպանության ներկայացվող ատենախոսություններում առկա նորոյթի գնահատման նոր ու հստակ չափորոշիչներ, որոնք կբացառեն ինչ-որ իրողության կամ երևույթի պարզ նկարագրությունը ատենախոսություն համարելու՝ ներկա գործելակերպի պահպանումը:

Հինգերորդ. հասարակական ու հումանիտար գիտությունների ասպարեզում ներկայացվող բոլոր ատենախոսությունները պետք է հիմնված լինեն համաշխարհային գիտության արդի մակարդակին համապատասխանող տեսական գիտելիքների և դրանցից բխող հասկացության համակարգի, մեթոդաբանության ու մեթոդիկայի որոշակի ու հստակ բազայի վրա, որը թույլ կտա այս կամ այն երևույթի նկարագրությունը փոխարինել նրա գնահատման գիտական հայեցակարգով:

Վեցերորդ. առայժմ հարկ է հրաժարվել հրապարակվող հոդվածների թվաքանակի ավելացումից և դրա հիման վրա գիտական հրապարակում-

ներ տպագրելու համար ՀՀ ԲՈԿ-ի թույլատրած հանդեսների արհեստական «բազմացումից», քանի որ դրանց որակական ցուցանիշների հաշվարկման գործը՝ **գիտաչափությունն** այսօր իրականացնում է ոչ թե այդ հաստատությունը, այլ Գիտության պետական կոմիտեն ու նրան կից կառույցները: Քանի դեռ ՀՀ ԲՈԿ-ը չի վերածվել Ազգային փորձագիտական կենտրոնի, ոչ թե ինքը պետք է տրամադրի այս կամ այն հանդեսում հոդվածներ տպագրելու թույլտվությունը, այլ հիմնվի գիտաչափության միջազգային չափանիշների վրա խարսխված միասնական-համապետական շտեմարանի վրա:

Յոթերորդ. պետք է մշակել ու կառավարության հաստատմանը ներկայացնել անցած 10-ամյակում պաշտպանված ատենախոսությունների որակական ցուցանիշների վերագնահատման որոշակի ընթացակարգ և այդ ընթացքում հովանավորչության միջոցով հաստատված ատենախոսություններում ակնհայտ գրագողության փաստեր արձանագրվելու դեպքում չեղարկել համապատասխան գիտական աստիճանները:

Այս շահագրգիռ խոսակցությունը սկսում ենք այն պատճառով, որ այսօր ի տարբերություն մեր պետական այլ մարմինների՝ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի մոտ նկատվում է մասնակի բարեփոխումներ իրականացնելով՝ իրավիճակը շտկելու որոշակի ցանկություն, որի ընդհանուր ուղղվածությունն առայժմ ձիշտ հունի մեջ է, սակայն կոնկրետացման ու հստակեցման կարիք ունի: Մեր փոխարեն ոչ որ չի մաքրելու հայրենի գիտության ավգյան ախոռները, որոնք քարացած հնի ու դանդաղորեն աճող և դեպի լույս ու ձանաչում ձգտող նորի մի զարմանալի խճանկար են հիշեցնում:

Համահարթեցման խորհրդային գործելակերպը փոխարինելով գիտական արդյունքի գնահատման ժամանակակից չափանիշներով՝ մենք պարտավոր ենք աջակցել ու թիկունք կանգնել այն տաղանդավոր երիտասարդներին, ովքեր մեր երկրին բաժին ընկած համընդհանուր լճացման տասնամյակում անգամ կայացել են որպես գիտնականներ:

Խմբ.:

SCIENTIFIC STANDARDS

Key words – standards, quality, humanities, specialized council, dissertation, journal, defense, expert, methodology, concept.

Edit.

КРИТЕРИИ НАУЧНОСТИ

Ключевые слова – критерии, качество, гуманитарные науки, специализированный совет, диссертация, журнал, защита, эксперт, методология, концепция.

Red.